

Մ Ի Չ Ր Ո Յ Յ *)

(Լ. Ն. ՏՕԼՍՈՅ)

Մի շատ հեռու երկրում ապրում էր մի թագաւոր:
Մերութեան օրերին նրա սիրտը դառնացաւ:

— Կեանքիս մէջ, ասում է նա, ամեն ինչ տեսայ և
չը կայ մի բան, որը մատչելի լինէր մարդկային աչքին, որ
ես աչքաթող արած լինեմ: Սակայն կեանքիս մէջ մի բան
չիմացայ— Աստծուն չտեսայ: Ուզում եմ նրան տեսնել:

Եւ հրաման արձակեց իր իշխաններին, զիտուններին
և քահանաներին:

— Եթէ ցոյց չը տաք ինձ Աստծուն, բոլորիդ կաքսո-
րեմ և կը պատժեմ չարաչար կերպով:

Եւ նրանց ժամանակ տուաւ երեք օր:

Պալատում տիրեց ընդհանուր լքում: Բոլորը սրտա-
տրոփ սպասում էին օրհասական ժամին:

Երրորդ օրը, ճիշտ կէսօրին, թագաւորը նրանց իր
մօտ կանչեց:

Լուռ, զլիսիկոր կանգնած էին թագաւորի առաջ զի-
տունները, քահանաները և պալատականները, և սոսկալի
հրամանն արդէն պատրաստ էր դուրս թռչելու թագաւորի
բերնից, երբ դաշտից վերադարձող մի հովիւ ներս մտաւ
և ասաց:

— Թոյլ տուր ինձ, թագաւոր, քո ցանկութիւնդ կա-
տարելու:

— Լաւ, պատասխանեց թագաւորը, բայց իմացիր, որ
հակառակ դէպքում զուլսդ պատասխանատու պիտի լինի:

Հովիւը հրաւիրեց թագաւորին դուրս՝ կանգնացրեց
հրապարակի վրայ, ցոյց տուաւ փայլուն, շողշողուն արևը
և ասաց:

— Նայիր նրան, թագաւոր:

*) Այս գրոյցը պատմել է Լ. Ն. ՏՕԼՍՈՅը զիւղացիներին նրանց հետ
ունեցած մի խօսակցութեան ժամանակ:

Թագաւորը գլուխը բարձրացրեց, ուղեց նայել, բայց արեւի սուր ճառագայթները ծակծկեցին նրա աչքերը. նա գլուխը կախեց և աչքերը փակեց:

— Ի՞նչ է, ասաց նա հովուին, դու ուզում ես ինձ կուրացնել:

— Թագաւոր, ասաց այն ժամանակ հովիւը, սա դեռ Արարչի հրաշագործութիւններից մէկն է, նրա վսեմութեան միայն մի փոքրիկ նշոյլը, փոքրիկ անկիւնը՝ Աստուածային մշտաժառ խարոյկի: Հապա ի՞նչպէս ես դու վստահանում մօտենալ և տեսնել նրանց քո թոյլ աչքերովդ: Դու Աստուծուն տե՛ռ ուրիշ աչքերով:

Թագաւորը այս հաւանեց և ասաց հովուին.

— Տեսնում եմ, որ խելօք մարդ ես. հապա այժմ ասա՛ ինձ, թէ ի՞նչ կար Աստուծուց առաջ.

Հովիւը մտածեց և ասաց:

— Խնդրում եմ, թագաւոր, նեղութիւն կրիր համարելու:

Թագաւորը սկսեց.

Մէկ, երկու,...

— Ո՛չ, ո՛չ, ընդհատեց հովիւը, այդպէս չէ. դու սկսիր մէկից առաջ:

— Ի՞նչպէս կարելի է մէկից առաջ, եթէ ոչինչ չը կայ:

— Խելօք բան ասացիր, թագաւոր, ուրեմն Աստուծուց առաջ էլ ոչինչ չի եղել:

Թագաւորը էլ աւելի հաւանեց այս և ասաց:

— Մեծամեծ պարգևների կարժանացնեմ ես քեզ, միայն թէ ասա՛ ինձ, ի՞նչ է անում Աստուած:

Հովիւը, տեսնելով թագաւորի բարի վերաբերմունքը, ասաց.

— Լաւ, ես այդ հարցին կը պատասխանեմ, միայն կատարիր իմ խնդիրս. եկ փոխենք մեր հագուստները.

Թագաւորը հանեց իր թագաւորական զգեստը և հագցրեց հովուին, իսկ ինքը հագաւ նրա չուխան և կախեց հովուական պարկը:

Հովիւը ելաւ բարձրացաւ թագաւորի դահլիճ, առաւ

ձեռը թագաւորական գայիսոնը և ասաց իր գահոյքի ներքև կանգնած հովուական պարկը վզից կախած թագաւորին.

— Ահա՛ թէ ի՛նչ է անում Աստուած: Մէկին գահն է քարձրացնում, միւսին՝ գահից տապալում:

Եւ ապա իջաւ և հագաւ զարձեալ իր ցնցոտիները: Թագաւորը խոր մտածմունքի մէջ ընկաւ: Այդ խօսքերը նրա վրայ խոր ազդեցութիւն էին զործել: Եւ յանկարծ, մեծ ցնծութեամբ նա բացականչեց.

— Ահա այժմ ես տեսնում եմ Աստծուն:

Փոխ. ն. Հ.

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ*)

Տեսնենք կը գնամ, կը գնայի ձեերի գործածութիւնները: Կարելիական եղանակով, ինչպէս տեսանք, եղելութիւնը պատկերացում է ոչ իբրև իրական, այլ իբրև մտածուած, կարծուած, հնարաւոր, այսինքն այնպիսի որ կարող է լինել, գուցէ, կարելի է լինի: Ուստի այս եղանակով խօսողը ոչ թէ ստոյգ, հաւաստի հաստատութիւն է անում, այլ անստոյգ, մեղմ հաստատութեամբ, քաղաքավարութեամբ, ենթադրելով իր կարծիքն է յայտնում: Մեր կը մասնիկով կազմութիւնների այս նշանակութիւնը շատ պարզ երևում է, երբ հանդիպադրում են սահմանական եղանակի համապատասխան ժամանակներին: Առնենք նախ քաղադրեալ, ապա պարզ ժամանակները:

1. Օտեմ. Այս բողոքիս որ խօսում եմ, նա գնում ե, — Երէկ, ժամի 5-ին նա գնում եր (իրական եղելութիւն). Ենթադր. Այս բողոքիս որ խօսում եմ, նա գնալիս կը լինի (գնում կը լինի), — Երէկ, ժամի 5-ին նա գնալիս (գնում) կը լիներ (հնարաւոր, կարծուած եղելութիւն. կարող է, կարող էր գնալիս լինել): Շուտ գնա, մայրդ հիմա տանը սպասում ե քեզ, — Շուտ գնա՛, մայրդ հիմա ասանը քեզ սպասելիս կը լինի: Գնում, կանգնում ենք. . . ամենքս մի ծառի տակ. ես ասում եմ՝ այ ծառ քո անունդ Գրիգոր է. դու էլ, ի հարկէ, ասում կը լինիս՝ Բաղալ է (Պոռօ.): Ընկերս պատմում էր, թէ մի օր հիացմունքով էր մտածում այն ժամի ու վայրկեանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ զգնում կը լիներ հայրենիքում (Մուրացան):

*) Տե՛ս 1942 թ. № 2.